

ՆԵՐՏՈՒՆԱԿԵՐՈՐԴԱՍՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Маскъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Գրագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(քաջի կիրակի եւ առն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է առն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԵՐՈՒՆԻ

ԲՈՒՄԱՆԴԱՌՈՒԹԻՒՆ

Գրագրութեան հարցը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ.—Նամակ Երևանից. Նամակ Խմբագրու-
թեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԱՅԿԱՐԵՆԻ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱ-
ՆԱՍԻՐԱԿԱՆ.—Պարսկաստանի առևտրական վի-
ճակը:

ԳՐԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Երբ մի քանի ամիս առաջ տեղական կո-
միտեաները սկսեցին զբաղվել գիւղատն-
տեսութեան վիճակի բարելաւման հարցով,
առանձին ոյժով հանրէս եկաւ ժողովր-
դական կրթութեան և գրագրութեան
նշանակութիւնը: Պէտք է երկրագործը
լինի զբաղեւ իւր կարողանայ կարգաւ, որ-
պէս զի նա ընտելանայ բարեօրոշման
մտքներով մտքին և կարող լինի օգտվել
գիտութեան ցուցումներով: Նոյն տեսակ
ձևակերպութիւն լսվեց և մի քանի հա-
մագումար ժողովներում: որոնք վերջին
տարիներս քննում էին արհեստագիտու-
թեան, տնայնագործութեան զարգացման
հարցերը:

Մենք լսում ենք նոյն ձայնը և այժմ,
երբ քննվում է մի այնպիսի հարց, ինչպէս
է երկաթի գործադրութեան հարցը:
Ներկայումս Պետերբուրգում տեղի ունի
մի յատուկ խորհրդակցութիւն այդ հարցի
վերաբերութեամբ: Երկաթի գործադրու-
թեանը տրված է պետական նշանակու-
թիւն: Ֆինանսների մինիստրը խօսեց մի
երկար ճառ այդ հարցի առիթով, զանա-
զան մասնագէտներ և մամուլի օրգաններ
նուիրեցին նրա քննութեան մի շարք յո-
ղուածներ և խորհրդակցութիւններ:

Երկաթը տուել է Անգլիային և Ամերի-
կային մեծ հարստութիւն. նա որոշ փո-
փոխութիւններ է մտցրել ընդհանրապէս
եւրոպական կուլտուրայի մէջ: Ռուսաս-
տանը նոյնպէս ցանկանում է զարգացնել
երկաթի գործադրութիւնը, տեսնելով դրա
մէջ երկու տեսակ շահ, մէկը այն, որ եր-
կաթագործութիւնը զարգանալով, կը դառ-
նայ երկրի հարստութեան աղբիւրներից
մէկը, իսկ միւս կողմից ազգայնականութիւ-
նը, ընտելանալով երկաթի գործադրու-
թեանը, կը մտնէ իր գործնական կեան-
քի շրջանում երկաթեայ գործիքներ և
շինութիւններ, որոնք աւելի կատարեալ

են և ձեռնտու, քան փայտից և քարից
կառուցած իրերը: Երկաթի գործադրու-
թեան տարածումը հետեւեց և ընդհա-
նուր կուլտուրայի զարգացման և իր կող-
մից այդ կուլտուրան ծնում է նորանոր
պահանջներ երկաթի գործադրութեան վե-
րաբերութեամբ: Ահա ինչ պատճառով
հանրային կրթութեան զարգացումը և
գրագրութեան տարածումը համարվում
են և ներկայ հանգամանքում ամենազո-
րաւոր միջոցներից մէկը նպաստելու այդ ար-
դիւնագործութեան առաջադիմութեանը:

Չանազան տեսակ կարծիքների քննու-
թիւնը միաբերան խօսում է գրագրութե-
ան զարգացման անհրաժեշտութեան
մասին: Պետութիւնը զգում է այդ պա-
հանջի նշանակութիւնը և մեծութիւնը:
Բայց հարց է ծագում, թէ ինչ միջոցով
կարելի է իրագործել ընդհանուր գրագի-
տութեան առաջարկը Ռուսաստանում: Մի
այդպիսի մեծ գործ պահանջում է տա-
նական միջոցների ծախք իւրաքանչիւր տա-
րի: Մնում է, որ պետութիւնը կարող
նայ այնպիսի միջոցներ մշակել, որ այդ
մեծ գործի հոգատարութեան և ծախքի
ապահովութեան մի մասը իր վրա վերցնէ
հասարակութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Տիկին Սիրանոյշ շարունակում է իր ներ-
կայացումները և նրանք անհետաքրքիր չեն
անցնում: Ամսին 20-ին, երկրորդ անգամ, խա-
ղաց «Համլետ», 23-ին «Մեդէա», իսկ վաղը,
27-ին, խաղալու է «Թագի համար» պիեսան:

Այսօր էլ նոյն բեմի վրա թեմական դպրոցի
երեւոյցողութեան ուսուցիչ Բաղդասարեան իր
կազմած քառամասն խմբով տուեց մի կոնցերտ:
Բաղդասար 24 ժողովրդական և այլ երգերից:
Որովհետև յիշեալ ուսուցիչը Կոմիտաս վարդա-
պետի աշակերտն է և իսկապէս Կոմիտաս վար-
դապետը եղել է կազմողը այս խմբի, արժէք
նրա մասին մի երկու խօսք ասել:

Կոմիտաս վարդապետի ներկայութիւնը էջ-
միածնի պատերի մէջ մի ուրախալի երևոյթ է:
Մի մարդ, որ որոշ պատրաստութիւն ձեռն
բերելով և իր ընդունակութիւնով նուիրած
երաջտութեան և առանձնապէս մեր ժողո-
վրդական երգերի և մտերմների ուսումնասի-

րութեան, այսօր հանդիսանում է նրանց
ընդհանրացող սկզբով ճեմարանից: Նրա գոր-
ծը մեր աչքում այնքան բարձր է, որ չենք
կարող մեր գոհունակութիւնը չը յայտ-
նել: Կոմիտաս վարդապետը, որքան գի-
տեղի, միակն է ճեմարանի սաներից, որ
արհամարելով աստուածաբանութիւնը և ընտ-
րելով երաժշտութիւն, այսօր իր ֆարաշայի
չնորհիւ մուտք գործելով չոր ու ցամաք աս-
տուածաբանութեան և գրաբանի այդ մշտա-
տանը, կենդանի երգ, ժողովրդական լէ լէ,
սիրտ ու զգացումներ է ներշնչում ճեմարանի
սաների մէջ: Բացի այդ նա կարծես իր ֆա-
րաշայով ցրեց այն միջնադարեան ցնդաբա-
նութիւնը, որը միաստուածութեան կողմէն չէր
ընդունում երգի մէջ քառամասնութիւնը:

Կոմիտաս վարդապետը ճեմարանում այժմ
ունի կազմած մի քառամասն խումբ, որը պա-
տիւ է բերում նրան: Նա ճեմարանի աշակերտ-
ներից պատրաստում է երգեցողութեան ու-
սուցիչներ, ինչպէս է և վերը յիշված Բաղդա-
սարեանը:

Գալով այսօրվայ կոնցերտին, նա չը թողնեց
ապառաւ տպաւորութիւնը, եթէ չը հաշտեց մի
երկու ժողովրդական երգերը: Եթէ պ. Բաղ-
դասարեանը լաւ ուսուցիչ է թեմական դպ-
րոցում, այդ դեռ եւս չէ նշանակում, որ նա
կարող է բեմի վրա էլ լաւ քառամասն խումբ
կառավարել: Այս դիտողութիւնը աւելի կա-
րեւոր է Կոմիտաս վարդապետին մանաւանդ
այն տեսակէտից, որ նա մեծ չնորձ ունի իր
գործի մէջ, նրա ճեմարանի խումբը գեղեցիկ
երգում է, իսկ նրա կազմած մի այլ խումբ
դեռ եւս անփորձ աշակերտ-ուսուցիչի ղեկավա-
րութեամբ թող տպաւորութիւն է թողնում
ժողովրդի վրա: Ցանկալի էր, որ Կոմիտաս
վարդապետը ինքը իր խմբով դուրս գար բեմ
ցուց տալու իր չնորձը:

Ն. Բաղդա վարդապետի մասնակցութեամբ
մական դպրոցի բաւականապէս աշակերտներ
և հոգաբարձութիւնը նպաստեց էր կոնցերտի
աղով անցնելուն, այն ինչ անցեալ տարի ոչ
միայն արգելեցին աշակերտներ դուրս բերել
բեմ, խորհրդատուներ հանել նրա դէմ, այլ և
դպրոցի դաշնամուրը յետ տարվեց փորձերի
տեղից:

Ա.—Դ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կարս, ապրիլի 12-ին
«Մշակ» 66-րդ համարում տպված էր մի
թղթակցութիւն Կարսից Հ. Նոնրատեանց օտո-

հանում է Պարսկաստանի Այլաքան երկար ճա-
նապարհը կտրելով, ապրանքը փչանում է,
շարքվում է, պէտք է լինում անագին կոմիտ-
սիոնէքական ծախքեր վճարել և այդ բոլոր
ծախքերը բարդվում են, ի հարկէ, ապրանքի գին
վրա, մինչդեռ ուսական ապրանքը կենթակա
չէ այդպիսի ծախքեր և աննպաստ պայմաննե-
րի և փոխադրութեան միջոցները Ռուսաստա-
նի և Պարսկաստանի մէջ աւելի հեշտ և նպաս-
տաւոր լինելով, ուսական ապրանքի գինը
նշանաւոր կերպով կարող էր էժան լինել և
անագին մրցումն անել եւրոպականի հետ գին
կողմից:

Սակայն իրականութիւնը դրա հակառակն
էր. եւրոպական ապրանքը, չը նայելով իր
աննպաստ պայմաններին, աւելի և աւելի էր
տարածվում, իսկ ուսականը, իր նպաստա-
ւոր պայմաններով հանդերձ, տարածվում էր
չտան դանդաղ, այն էլ կառավարչական պրէ-
միաների օժանդակութեամբ: Դրա պատճառ-
ները չառ են. գլխաւորն այն է, որ ուսական
ապրանքներից շատերը թանգ են նստում ի-
րանց գործարանատեղերի վրա, հետեւաբար
անկարելի է լինում ծախել եւրոպականի ար-
ժէքով, ուսական գործարաններից և ֆաբրիկ-
ներից շատերը իրանց գործիքները օտանում
են եւրոպայից կամ Ամերիկայից, անագին
մաքս վճարելով և այդ հանգամանքը, ի հար-
կէ, ազդում է ապրանքի թանգութեան վրա:

րագրութեամբ Թղթակցից, խօսելով դերա-
սան Արմենեանի մարտի 23-ին Կարսի հաստ-
րակական ժողովարանում տուած ներկայաց-
ման մասին, ի միջի այլոց գրում է ժողովա-
րանի վարչութեան հասցէին հետեւեալը. «Մի
երկու խօսք էլ կլուրի միշտ կրկնվող անկա-
նօնութիւնների մասին արժէ ասել, որոնք
միշտ ու միշտ խանգարել են ներկայացումնե-
րին և վրդովեցրել հասարակութիւնը: Կլուրի
վարչութիւնը, ինչպէս երեւում է, միմիայն
ներկայացումներից փող ստանալու վրա է մը-
տածում, իսկ նրանց որ և է յարմարութիւններ
տալու մասին երբէք չէ մտածում»:

Սա, ինչպէս ժողովարանի վարչութեան ան-
գամ, կառավարիչ և գանձապահ, պարտք եմ
համարում պատասխանել պ. Հ. Նոնրատեան-
ցին հետեւեալը.—Կարսի հասարակական ժողո-
վարանը, ունենալով ընդամենը 96 անդամ,
պահվում է գլխաւորապէս անդամավճարներով.
Իւրաքանչիւր անդամից ստացվում է տարե-
կան 15 ռուբլի, որի վճարման ժամանակը ո-
րոշված է մայիսի 22-ին Անգամներէից շաաե-
րը, այցելելով ժողովարանը, համարեալ ամեն
օր, սկսած 1902 թիւ մայիսի 22-ից, մինչև
այժմ մերժում են վճարել անդամավճարը, չը
նայելով որ վարչութիւնը շարունակ յիշեցրել
է պահանջել է: Այդպիսիներից մէկն է և պ.
Համագապ Նոնրատեանց:

Ներկայ տարվայ փետրվար ամսին ժողովա-
րանի վարչութիւնը պաշտօնական գրութեամբ
յայտնեց ի միջի այլոց և պ. Համագապ Նոն-
րատեանին, որ նա կանոնադրութեան § 19-ի
համաձայն, իբրև չը վճարող անդամ կը զրկվի
անդամութեան իրաւունքից, սակայն պա-
րոնը մարտի 17-ին վճարելով միմիայն 10
ռուբլի, մինչև այժմ չի կանխում վճարել
մնացորդ 5 ռուբլին: Իսկ նրա հարազատ եղ-
բայր Կարապետ Նոնրատեանը, Ա. Զառեանը,
Ն. Բառեանը, Ե. Բառեանը և ուրիշները,
պատիւիկների ցուցակում գրել են «Երաւար-
վում ենք կրթել և անդամ լինելուց», կարծելով
որ այդպիսով կազաւովեն տրվելիք անդամա-
վճարից:

Այժմ մնում է ինձ հարցնել պ. Համագապ
Նոնրատեանից, եթէ նրանք տառնակ անգամ
յիշեցնելուց և պահանջելուց յետոյ, կրկին չեն
կանխում վճարել կրթելի հասանելիք գումա-
րը, ինչ միջոցներով պիտի պահվի ժողովա-
րանը, կամ թէ ինչ միջոցով վարչութիւնը կա-
րող է կարգի բերել դանիճը կամ բեմի և վե-
րացնել այն անդամութիւնները, որոնց մա-
սին գրել է ինքը: Պարտք եմ համարում ասել-
լացնել, որ չը նայած որ վարչութեան խոր-
հուրդը որոշել է դանիճի և բեմի վարձը աւելի
դերասաններից 25 ռուբլի, եւս ստիպուած եմ
լինում շատերիցը աւելի 10 կամ 15 ռուբլի և
այդպիսով հնարաւորութիւն եմ տալիս դերա-
սաններին մնացած վճարի փոխարէն օտրել
բեմը իրանց հայեցողութեամբ:

Մարտի 23-ի ներկայացման համար ստացել
եմ պ. Արմենեանից ընդամենը 10 ռուբլի:
Վարչութեան անդամ Աշոտ Յովհաննիսեան

Դա, ի հարկէ, պատճառներից միւսն է, կան և
ուրիշ պատճառներ, ինչպէս ապրանքի որա-
կութիւնը և այլն: Ռուսական շաքարը աւելի
թանգ է, քան ֆրանսիականը. 20 տարի
առաջ ամբողջ Պարսկաստանը գործ էր անում
ֆրանսիական (Մարսէյի) շաքար, բայց այսօր
տիրապետողը ուսական շաքարն է, որ ծախ-
վում է Պարսկաստանում: Մեզ մօտ, Թիֆլիս,
Մոսկով, Բաքու շաքարի ֆոնտը 15—16 կօ-
պէկ է, բայց այդ մի և նոյն շաքարը տարվե-
լով Պարսկաստան, կրելով փոխադրութեան
ծախք, մաքս, ծախվում է ֆոնտը 12 կոպէկով:
Պատճառն այն է, որ ուսական կառավարու-
թիւնը պրէմիա է տալիս շաքար տանողներին
և անա այդ միջոցով ուսական շաքարը կա-
րողացել է դուրս հանել Պարսկաստանից
ֆրանսիական շաքարը: Եթէ պրէմիան վերցնվի
շաքարի վրայից, գուցէ էլի ֆրանսիական շա-
քարը սկսէ գրաւել ուսական վաճառանոց-
ները: Կան, ի հարկէ, ուսական և այնպիսի
ապրանքներ, որոնք, որակութեան կողմից
բարձր են եւրոպականից և բաւական էժան
ու առանց պրէմիայի էլ կարողանում են տա-
րածվել, բայց այդ տեսակները սակաւ են:

Ձը նայելով այդ բոլոր հանգամանքներին,
պէտք է ասել, որ այնու ամենայնիւ, ուսա-
կան ապրանքները վերջին 5 տարվայ ընթաց-
քում սկսել են զօրեղ մրցութիւն կատարել
եւրոպականի հետ և արդէն մենք տեսնում, որ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՐՏԱՍՏԱՆԻ ԱՌԵՏՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

II

Մօտ 22 տարի առաջ Պարսկաստանը ստա-
նում էր ապրանք Եւրոպայից Ռուսաստանի
վրայով, տրանզիտով, բայց Ռուսաստանը,
ինչպէս յայտնի է, փակեց տրանզիտը Եւրո-
պայից Պարսկաստան, թողնելով միայն տրան-
զիտը՝ Պարսկաստանից Եւրոպա, այսինքն
Պարսկաստանը կարող է իր արտադրութիւն-
ները ուղարկել զանազան երկրներ Ռուսաս-
տանի վրայով, տրանզիտով: Ճիշտ է, այդպիսի
ապրանքների համար եւս ուսաց մաքսատները
մաքս են վերցնում, բայց այդ մաքսը վերա-
դարձնվում է հետեւեալ օգնամանգլիւսում, երբ
ապրանքը դուրս է տանվում կայսրութեան
օգնամանքից: Եթէ Պարսկաստանին տրված
չը լինէր այդ օգնամանքի իրաւութիւնը, այն է
իր ապրանքները Ռուսաստանի վրայով, տրան-
զիտով անցկացնելը, նրա առևտրական վիճակը
չառ անսխալանէի պէտք է լինէր:

Տրանզիտի փակվելու պատճառով, Անգլիան,
Աւստրիան, Գերմանիան, Յիւստիան իրանց
ապրանքները մտցնում են գլխաւորապէս

Электронпечатная Груз. Изд. Т-ва, Б.-Ванская ул.